Օրեցօր ավելի ամուր

Նպատակ:

Բարելավել զինվորական ծառայության ժամանակ կամ 2020 թ-ի Արցախյան պատերազմի ռազմական գործողությունների արդյունքում վիրավորում ստացած կամ հաշմանդամություն ձեռք բերած զինվորականների կյանքի որակը:

Գործողություններ:

Ձեռք բերել վիրավորում ստացած զինվորների վերականգնողական խնամքի համար անհրաժեշտ սարքավորումներ:

Ծրագրի նկարագրություն:

Շիրակի մարզում վիրավոր զինվորներին վերականգնողական ծառայություններ տրամադրող միակ հաստատությունը մինչ այժմ Գյումրիի վերականգնողական կենտրոնն է եղել: Սակայն 2020 թ-ի Արցախյան պատերազմից հետո վիրավորում ստացած զինվորների թիվը կտրուկ աճել է և կենտրոնն այլևս իվիճակի չէ սպասարկել բոլորին: Հենց այդ պատճառով Գյումրիում գտնվող **«Էմիլի Արեգակ» կենտրոնը** որոշեց նախաձեռնել խնդրի լուծմանն ուղղված ծրագիր և կիսել այդ բեռը:

«Էմիլի Արեգակ»-ը հատուկ կարիքներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար նախատեսված թերապևտիկ աջակցության և զարգացման կենտրոն է: Այն հիմնադրվել է **«Հայկական Կարիտաս»**-ի կողմից, որի նպատակը հաշմանդամություն ունեցող երիտասարդներին աջակցելն է:

«Էմիլի Արեգակ» կենտրոնի առաքելությունն է օգնել հաշմանդամություն ունեցող երիտասարդներին ապրել ավելի առողջ, անկախ և ինտեգրված կյանքով `մի շարք թերապևտների և սոցիալականացման գործողությունների, ինչպես նաև երիտասարդների վերապատրաստման և զբաղվածության նախաձեռնությունների միջոցով: Կենտրոնն ամեն ամիս սպասարկում է ցածր եկամուտ ունեցող ավելի քան 120 շահառուների, ինչպես նաև նրանց ծնողներին հոգեբանական աջակցության ծառայություններ է մատուցում ` բոլորը անվճար:

Պատերազմում ծառայելիս «Հայկական Կարիտաս»-ի ֆիզիոթերապևտ Աշոտ Շահինյանը իր ծառայակիցների վիրավորումների ահռելի պատկերի է ականատես եղել: Ներկայումս վիրավոր և հաշմանդամություն ունեցող վետերանների առջև ծառացած ամենամեծ մարտահրավերներից մեկը նրանց առօրյա գործունեության սահմանափակումն ու անկախությունն է: Այդ իսկ պատճառով վերականգնողական թերապիայի և մերսման ոլորտում իր փորձը հաշվի առնելով պարոն Շահինյանը ցանկացավ օգնել Շիրակի մարզի զինվորներին ապաքինվելու և վերականգնելու հարցում:

«Էմիլի Արեգակ» կենտրոնն ունի տարածք և փորձ՝ վիրավորված զինծառայողներին սոցիալ-վերականգնողական օգնություն ցուցաբերելու համար: Սակայն, քանի որ կենտրոնը սպասարկում է հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, այն չունի բոլոր անհրաժեշտ սարքավորումները մեծահասակների հետ աշխատելու և, մասնավորապես, վիրավոր զինծառայողների առջև ծառացած ֆիզիկական վնասվածքների վերականգնման համար:

«Հայկական Կարիտաս»-ը հոգալու է զինծառայողների հետ աշխատող մասնագետների վարձատրման ծախսերը: «Այո»-ն ևս ցանկացավ միանալ այս չափազանց կարևոր նախաձեռնությանը՝հետևյալ սարքավորումների ֆինանսավորումը տրամադրելու համար.

• Ստացիոնար հեծանիվ
• ֆիզիոթերապիայի աստիճան
• Հավասարակշռության տախտակ
• Յոգայի գորգեր
• Քայլակ
• Վազքուղի
• Ձեռքի կշիռներ
• Մարզման աթոռ
• Շվեդական սանդուղք
• Ձեռքի նեցուկ

Այս ռեսուրսները կենտրոնին հնարավորություն կտան մասնագիտական վերականգնողական ծառայություններ մատուցել Շիրակի մարզի տեղական համայնքների գրեթե 40 հաշմանդամ վետերաններին հետևյալ կերպ.

Շահառուներին շաբաթական 6 օր աջակցություն կտրամադրվի՝ յուրաքանչյուր անհատական այցի տևողությունը միջինը 30-40 րոպե: Ինտենսիվ (ամենօրյա) այցերի դեպքում վերականգնողական դասընթացը բաղկացած է լինելու 20 այցից: Հիմնվելով շարունակական գնահատումների վրա, ըստ անհրաժեշտության, շահառուն կշարունակի աջակցություն ստանալ ` համաձայն մասնագետի ուղեցույցների և եզրակացության:

Միացե՛ք մեզ այս նախաձեռնությունը իրականություն դարձնելու համար:

Բյուջը

Ինչ	Քանակ	Միավորի արժեք	Ընդամենը ՀՀ դրամ
Ստացիոնար հեծանիվ	1	400,000	400,000
Ֆիզիոթերապիայի աստիճան	1	450,000	450,000
Հավասարակշռության տախտակ	1	25,000	25,000
Յոգայի գորգեր	4	10,000	40,000
Քայլակ	1	17,000	17,000
Վազքուղի	1	400,000	400,000
Ձեռքի կշիռներ	1	160,000	160,000
Մարզման աթոռ	1	311,000	311,000
Շվեդական սանդուղք	1	280,000	280,000
Ձեռքի նեցուկ	1	120,000	120,000

Ընդհանուր ծախս

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 510 ՀՀ դրամ

2 203 000Դ